1027 Փառք Քեզ Աստված, Հայր մեր երկնավոր

Փառք Քեզ Աստված, Հայր մեր երկնավոր
Փառք Քեզ Աստված, Որդի պատվավոր
Փառք Սուրբ Հոգի, Աստված փառավոր
Դու մարդկության հույսն ես դարավոր:

Փառք Քեզ (2), հավիտյանս հավիտենից, (2)
Հիսուս Փրկիչ աշխարհի արարիչ
Փառք անվանտ հավիտյան պանծալի
Փառք Քեզ (2), հավիտյանս հավիտենից: (2)

Դու արարիչ Աստված փառավոր
Ողորմած Տեր, Փրկիչ փառավոր
Հույսի ճամբա, լույսի աղբյուր
Բեր մեր սրտի կարոտը տուր:

Փառք Քեզ (2), հավիտյանս հավիտենից, (2)
Հիսուս Փրկիչ աշխարհի արարիչ
Փառք անվանտ հավիտյան պանծալի
Փառք Քեզ (2), հավիտյանս հավիտենից: (2)